ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱՆԵՍՅԱՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԱՐՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԸ ԲԱՐՈՅԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Այսօր հայոց նորանկախ պետությունն հիմնականում իր ուշադրությունը սևեռել է սոցիալ-տնտեսական, ռազմական, քաղաքական ոլորտներին, իսկ բարոյականը կարծես մղվել է հետին պլան: Մինչդեռ հասարակության զարգացման ցանկացած պատմական վիճակ անհնար է գնահատել՝ հաշվի չառնելով դրա բարոյական կողմը: Դժբախտաբար, մեր պետության մեջ կատարվում են համակարգային փոփոխություններ, որոնց բարոյական հետևանքների մասին ուշացումով մտածում կամ չեն էլ մտածում: Իսկ այդպիսի վարքագիծը հանգեցնում է ոչ միայն տնտեսական ու քաղաքական, այլև հոգևոր, բարոյական ճգնաժամերի, քանզի օրենքների վրա հիմնված բարոյականության կարևորագույն նախադրյալներն անձի ազատության ու նրա բարոյական ինքնորոշման հնարավորությունն են. բարոյական արժեհամակարգում անձի ազատությունից ու ինքնակամ ընտրությունից դուրս բարոյականությունը նույնչափ անհնար է, որչափ այդ արժեքներն ու պահանջները՝ առանց բարոյականության: Դեռևս 17-րդ դարի անգլիացի փիլիսոփա Թ.Հոբսն էր նշում, որ բարոյականությունն անբաժան է պետությունից, իսկ վերջինս էլ հնարավորություն է տալիս չարի ու բարու, արդարի ու անարդարի հասկացություններին տալ համընդհանուր բնույթ[1]:

Պետք է նշել, որ հասարակության զարգացման նախնական փուլում մարդկանց վարքը կարգավորողի դերով հանդես է եկել բարոյականությունը, իսկ հետագայում, հասարակական հարաբերությունների բարդացման բերումով, այն լրացվել է կարգավորման իրավական և այլ միջոցներով[2]: Հայ իմաստասերներից Հովհան Օձնեցին առաջիններից էր, որ իրավագիտությունը դասեց գործնական փիլիսոփայության (բարոյագիտության) շարքը: Միջնադարում կանոնական իրավունքն ու բարոյականությունը՝ որպես վարքի կարգավորման միջոցներ, հաճախ, նույնացվում էին: Որպեսզի մարդը հակվի դեպի բարին, դրականը, որպեսզի նա պատվիրազանց չդառնա, անհրաժեշտ էր կանոնաիրավական միջոցառումներով կարգավորել նրա վարքը[3]:

Բարոյականությունն ու իրավունքը, որպես վարքի ու հասարակական հարաբերությունների կարգավորման ձևեր, ներկայացնում են հասարակական կամքն ու անհրաժեշտությունն արտահայտող որոշակի պահանջների, նորմերի և օրենքների մի ամբողջություն: Այստեղ ամփոփված են իրերի ու երևույթների

արդարացի, պատշաճ կարգի վերաբերյալ պատկերացումները: Քաղաքակրթության զարգացման պատմությունը վկայում է, որ բարոյականությունն ու իրավունքը միմյանց հետ օրգանապես կապված են հբրև մշակույթի բաղադրիչներ: Հասարակության իրավական համակարգն ամրագրում է կենսական կարևորություն ունեցող բարոյական պահանջները: Բարոյականության և իրավունքի սերտ փոխկապվածությունը մատնանշում են Հին աշխարհի, Միջին դարերի ու Նոր ժամանակների տեսական մտքի հուշարձանները: Այդ մասին է վկայում օրենքների բովանդակության և իրավունքի այլ ակտերի գնահատման ժամանակ բարոյական չափանիշների կիրառման պահանջը: Այդ պահանջից ելնելով է, որ հայոց առաջին սահմանադրության նախագծի՝ «Որոգայթ փառացի» ստեղծողները «կարգ ու սահմանին», այսինքն՝ օրենքներին հետևելը համարում են բարոյական անհրաժեշտություն: Բոլորը, առանց բացառության, և, առաջին հերթին՝ պետության ղեկավարը, կաթողիկոսը, նախարարը, տանուտերը և մյուս պաշտոնյաները, իրավունք չունեն օրենքի շրջանակներից դուրս արարքներ թույլ տալ: Բոլորը պարտավոր են պահպանել օրենքը[4]:

Սակայն, անհրաժեշտ է նշել, որ մարդու վարքի կարգավորման միջոցների ու մեխանիզմների մեջ բարոյականությունն ու իրավունքն ունեն մի շարք տարբերություններ. իրավունքը, որն ունի ինստիտուցիոնալ-կազմակերպչական բնույթ, պետք է պարտադիր կերպով հաստատվի, վավերացվի և ապահովվի պետության կողմից: Ի տարբերություն իրավունքի, բարոյականությունը ձևավորվում է տարերայնորեն՝ հասարակական կյանքի ընթացքում: Բարոյականության պահանջներն ու արժեքները նախ պահպանվում են հասարակական կարծիքի միջոցով, արմատավորված բարքերով ու սովորույթներով, անձնական համոզվածությամբ: Բարոյականության պահանջներն ու արժեքները ոչ մի տեղ պաշտոնապես չեն ամրագրվում և գոյություն ունեն հասարակական գիտակցության մեջ՝ սկզբունքների, գնահատականների, իդեալների տեսքով: Բարոյականության պահանջները չեն կարող իրականացվել հարկադրանքի ուժով, քանզի դրանց պարտադիր լինելու հիմքում ընկած է ոչ թե պատժի վախը կամ օրինապահ քաղաքացու համբավ վայելելու ձգտումը, այլ դրանց ազատ ու ինքնակամ ընդունումը: Այլ կերպ ասած, բարոյական արարքը իրականացվում է ներքին դրդապատճառների հիման վրա, որը ենթադրում է այն հատկանիշների առկայությունը, համաձայն որոնց արարքը կատարվել է՝ ելնելով բարոյական արժեքների ու պարտքի նկատմամբ ձևավորված պատկերացումներից:

Եզրակացությունը, միանշանակ, մեկն է. մարդկային վարքի ու արարքների դրսևորումները կապվում են ազատության ընկալման հետ, որոնք էլ գնահատվում ու արժևորվում են բարու և չարի, խղճի ու ամոթի, պարտքի ու պատվի, պատասխանատվության ու արժանապատվության, սիրո ու երջանկու-

թյան հասկացությունների, բարոյական ապրումների ու զգացմունքների միջոցով, ուստի մարդկային վարքի կարգավորման մեջ կարևոր տեղ է զբաղեցնում բարոյափիլիսոփայության ուշադրության կենտրոնում գտնվող բարոյական ազատության հիմնախնդիրը: Այն, զարգացման տարբեր աստիճաններում, հարստացել է բովանդակային նոր որակներով: Մարդու ազատության հիմնահարցը քննարկվում է տարբեր մոտեցումներով՝ անհատական, քաղաքական, տնտեսական, ազգային և այլն: Պատմական որոշակի ժամանակաշրջաններում առավել մեծ շեշտադրում է ստացել դրանցից որևէ մեկը: Պատմականորեն սկզբում շեշտադրվել է մարդու ազատության բարոյահոգեբանական կողմը, որը վառ կերպով արտահայտվել է Սոկրատեսի, Պլատոնի, Դեմոկրիտի, էպիկուրի հայացքներում[5]: Նրանք գտնում էին, որ ազատությունն այն վարքն է, որը կարգավորվում է ոչ թե կրքի, զգացմունքների, այլ բանականության կողմից: Հիմնահարցի լուծման հետ կապված՝ բարոյափիլիսոփայության պատմության մեջ կարելի է առանձնացնել երկու դիրքորոշում.

1. Ազատ ընտրության հնարավորությունը՝ որպես բարոյական գիտակցության հիմք, ձևավորվել է դեռևս հելլենիզմի բարոյափիլիսոփայության մեջ՝ հանձին էպիկուրի փիլիսոփայության: Նա ազատության հիմնահարցը տեղափոխեց բարոյական դաշտ՝ ելակետ ունենալով ատոմիստական փիլիսոփայական ուսմունքը: Սակայն, ազատ ընտրության հիմնախնդիրն ամբողջական տեսք է ստանում քրիստոնեական էթիկայում: Վերջինս ելնում է այն դրույթից, որ մարդն ունի ազատ կամք, այսինքն՝ ինքն է կատարում ընտրություն: Փաստորեն, ըստ այս դիրքորոշման՝ ազատության էությունը կայանում է ընտրության հնարավորության մեջ:

2. Հետագայում ազատության հիմնահարցն արդեն կապվում է անհրաժեշտության հետ, որը, մասնավորապես, քննարկման առարկա են դարձնում Սպինոզան[6] ու Բեկոնը[7]: Այն պատմականորեն կապված է բնական գիտությունների բուռն զարգացման հետ: Այստեղ բարոյական ազատությունը պայմանավորվում է մարդու բնական ու սոցիալական իրավիճակով: Մարդը նյութական, մարմնական էակ է և ենթակա բնության օրենքներին: Որպես որոշակի հասարակության անդամ՝ մարդը ենթակա է պետության սոցիալական ու իրավաբանական օրենքներին, նորմերին ու ավանդույթներին: Այլ կերպ ասած, մարդու վրա ազդում են բազմաթիվ հանգամանքներ: Եվ եթե երբեմն հարց է ծագում, թե արդյ՞ոք ազատությունը հնարավոր է ամեն ինչում, ապա հարկ է նշել, որ խոսքը վերաբերում է ոչ թե անարխիային, այլ իսկապես հոգու ազատությանը, որի չափը որոշվում է իմացության աստիճանով. դրա լավագույն դրսևորումը Սպինոզայի այն արտահայտությունն է, ըստ որի՝ ազատությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ գիտակցված անհրաժեշտություն: Մարդը գտնվում է այն ուժերի իշխանության

ներքո, որոնց նա դիմակայել չի կարող: Սակայն, նա ինքնիշխան է այդ ուժերի ազդեցությունը ճանաչելու հարցում, և վերջինս ընդունելով որպես անհրաժեշտություն՝ այդ ուժերի ազդեցության համապատասխան է կառուցում սեփական վարքը: Փաստորեն, երկրորդ դիրքորոշման մեջ մարդու ազատության հիմնահարցը քննարկվում է իմացության տեսության շրջանակներում:

Ազատ ընտրությունը արտաքին ու ներքին հանգամանքների անխուսափելի ազդեցությունից ազատագրված ընտրությունն է, անձնական որոշման ակտ, սուբյեկտի անհատականության դրսևորում: Բայց, որպեսզի ազատ ընտրությունը կայանա, անհրաժեշտ է գիտակցում, առկա տարբերակները տեսնելու ընդունակություն և դրանցից մեկի վրա կենտրոնացում: Գիտակցումը ազատ բարոյական ընտրության անհրաժեշտ ատրիբուտն է: Եթե մարդն ընտրում է ինքնաբուխ, ըստ՝ «այլ կերպ չեմ կարող» և «չեմ տեսնում այլընտրանք» սկզբունքների, նա պարզապես ոչինչ չի ընտրում: Իսկ եթե գործում է հետևելով որոշակի ավանդույթների ու սովորույթների՝ այդ դեպքում նա ազատ չէ: Ընտրելու գիտակցումը ենթադրում է մարդու մեջ ռացիոնալ սկզբի ակտիվություն: Այլ կերպ ասած՝ հենց բանականությունն է մշակում բարոյական վարքագիծը, վերլուծում այս կամ այն իրավիճակը, որոշում նպատակը ու դրանց հասնելու միջոցները: Բայց արդյո՞ք բանականությունն է սոսկ մասնակցում մարդու ազատ ընտրությանը: Այս հարցի վերաբերյալ բարոյափիլիսոփայության մեջ կա մի տեսակետ, ըստ որի, առանց ապրումների, ձգտումների, ցանկությունների չի կարող իրագործվել ազատ ընտրություն, և մարդու ցանկություններն ու զգացմունքները դիտարկվում են որպես էներգետիկ աղբյուր, առանց որի բարոյական վարքը «շարժիչ» չունի: Ուստի, բարոյական ընտրությունը հենվում է ոչ միայն բանականության, այլև՝ ապրումների վրա:

Այսպիսով, բանականությունն ու զգացմունքներն են ձևավորում բարոյական համոզմունքները: Սակայն, այդ համոզմունքներն իրականություն դարձնելու, կենսագործելու համար անհրաժեշտ է կամային ուղղվածություն: Կամքի ուժը կարևոր է նպատակի ընտրության, որոշումների կայացման, գործողությունների իրականացման հարցում, որն էլ ապահովում է անձի բարոյական ակտիվությունը: Կամքի ուժը մարդուն ապահովում է ազատություն նույնիսկ այն ժամանակ, երբ նա այլընտրանքի ոչ մի հնարավորություն չունի: Մարդը ազատ չէ օբյեկտիվ հանգամանքներից, սակայն նա կարող է դրանց նկատմամբ այն դիրքը գրավել, որը կընտրի ինքը: Հանգամանքների նկատմամբ որոշակի վերաբերմունք ցուցաբերելու ընդունակությունը հոգևոր ազատության գլխավոր արժանիքն է: Մարդու ներքին-հոգևոր ազատությունն աճում է նրա ինքնակատարելագործման ձգտումից: Մարդն ընդունակ է ինքն իրեն փոխել, կառուցել սեփական անձի ամբողջականությունն այնպես, ինչպես ինքն է

ցանկանում: Ինքնակատարելագործման ազատությունը կախված չէ արտաքին ոչ մի գործոնից. այստեղ բավարար է ունենալ ազատ կամք, նպատակուղղվածություն, գիտակցված որոշում կայացնելու ընդունակություն:

Ազատությունը՝ բառի ամենալայն իմաստով, ոչ միայն «ազատություն է ինչ-որ բանից», այլև «ազատություն ինչ-որ բանի համար», այսինքն՝ որոշակի արժեքների, նպատակների, իդեալների ընտրություն՝ առկա անհրաժեշտության շրջանակներում: Այլ կերպ ասած, ազատությունը սեփական կողմնորոշիչների, ցանկությունների, ձգտումների համապատասխան գործելու հնարավորություն է: Այդ պատճառով, կարծում ենք, որ իրապես ազատ ընտրությունը կարող է տեղի ունենալ միայն ազատ կամքի դրական կողմնորոշիչների՝ արժեքների, նպատակների, իդեալների առկայության դեպքում: Դրական բարոյական ընտրության դեպքում խոսքը վերաբերում է արժեքների և սեփական դիրքորոշման համակարգի ընտրությանը՝ կանգնել բարոյականության, բարոյական արժեքների կողքին և գործել որպես բարոյական սուբյե՞կտ, թե՞ զոհաբերել բարոյական նկատառումները նպատակահարմարությանը, գործնական կենսական հաջողություններին, անմիջական շահերին: Սա բարոյական ընտրության հիմքն է, որը ձևավորում է կյանքի ամբողջ իմաստը, սուբյեկտի հիմնական էկզիստենցիալ դիրքորոշումները, սահմանում ու ուղղորդում վարքագիծը, որն ունի հիմնարար նշանակություն սուբյեկտի բնութագրման գործում:

Նեղ իմաստով՝ ազատ ընտրությունը ոչ միայն մարդու կողմից բարոյական արժեքները կարևորելն է, այլև, որոշակի հանգամանքներում՝ համաձայն դրանց գործելը և սեփական ընտրությունը գործնական որոշումների ու արարքների մեջ տեղափոխելն է: Սա արդեն որոշակի վարքի ընտրություն է, որտեղ մարդը պետք է բարոյական պահանջը համադրի հանգամանքներին, միավորի նպատակահարմարությունը բարոյական սկզբունքայնության հետ, ընտրի դրդապատճառի և արդյունքի համաձայնեցումն ապահովող անհրաժեշտ միջոցներ: Այստեղ առաջ է գալիս բարոյական ընտրության նպատակի և միջոցների փոխհարաբերության խնդիրը:

Բարոյափիլիսոփայական մտքի պատմության մեջ բարոյական ընտրության նպատակի ու միջոցի փոխհարաբերության վերաբերյալ ձևավորվել է երկու դիրքորոշում, որոնցում բացարձակացվել են կամ նպատակը կամ միջոցը:

Առաջին դիրքորոշումը ձգտում է ուժեղացնել բարոյականության ազդեցությունը՝ բարոյական սահմանափակումները հանելու միջոցով: Այստեղ ենթադրվում է, որ բարոյական նպատակին հասնելու համար կարելի է չվարանել միջոցների ընտրության հարցում՝ «նպատակը արդարացնում է միջոցները»: Այս դիրքորոշման կողմնակիցները գտնում էին /և գտնում են/, որ չարի դեմ արդյունավետ պայքարելու համար ոչ միայն կարելի է, այլև պետք է օգտա-

գործել ցանկացած միջոց՝ խորամանկություն, բանսարկություն, սուտ, խաբեություն, դավաճանություն, նույնիսկ բռնություն: Հակառակ դեպքում բարին միշտ կզիջի չարին՝ որպես անբարոյական, անսկզբունքային ուժի, եթե սկսի իրեն սահմանափակել բարոյական պարտավորվածություններով:

Սակայն, գործնականում այս դիրքորոշումը հանգեցնում է անքաքույց անբարոյականության ու ցինիզմի, քանզի չարի դեմ չարի օգնությամբ պայքարելու փորձերը քայքայում են բարոյականության արարիչ բնությունը: Հենց պրակտիկան ցույց է տալիս, որ միջոցները, որոնք իրենց բարոյական բնույթով չեն համապատասխանում հռչակվող նպատակներին, ամբողջովին աղճատում են դրանք և արդյունքում վերածվում են կործանիչ հետևանքների:

Երկրորդ դիրքորոշումը բացարձակացնում է միջոցների բարոյական արժեքը՝ տարանջատելով դրանք բացարձակ լավի, բարոյականի և վատի, անբարոյականի: Այստեղ բարոյական նպատակին սկզբունքորեն չի կարելի հասնել «վատ» միջոցներով, քանզի «մենք հնձում ենք այն, ինչ ցանել ենք»: Այդ պատճառով պետք է ընտրել միայն բարոյապես անբերի միջոցներ՝ չարի դեմ պայքարում չօգտագործելով անբարոյական միջոցներ: Սակայն, այս դեպքում էլ անհնար է դառնում աճող չարի դեմ պայքարելը: Չնայած որ այս դիրքորոշումը նպաստում է բարոյականության հեղինակության ամրապնդմանը, սակայն, առանց խիստ միջոցների ազդեցության՝ հնարավոր չի լինում արմատախիլ անել չարը:

Այս խնդրի լուծումը ոչ թե նպատակի ու միջոցների բուն հակադրության, այլ դրանց դիալեկտիկական փոխկախվածության բացահայտման մեջ է: Չ՞է որ մարդու կենսագործունեության ընթացքում նպատակներն ու միջոցներն անընդհատ փոխներգործում են, փոխարինվում մեկը մյուսով՝ միջոցները առարկայանում են նպատակահարմար գործունեության արդյունքում, որոնք իրենց հերթին դառնում են առավել բարձր նպատակների հասնելու միջոցներ: Այդ պատճառով՝ նպատակը չի արդարացնում, այլ որոշում և կանխորոշում է իրեն համապատասխանող միջոցները, իսկ վերջիններս, իրենց հերթին, բնութագրում են ստացված արդյունքը, որում մարմնավորված է նպատակը:

Բարոյականության մեջ բարոյական և միաժամանակ արդյունավետ, նպատակահարմար է այն միջոցը, որն անհրաժեշտ ու բավարար է ազնիվ նպատակին հասնելու համար և չի աղճատում նրա բարոյական արժեքը: Միջոցը բարոյական գործունեության մեջ պետք է ամենալավ, այլ ոչ թե ամենակարճ կամ ամենաարագ ճանապարհով հանգեցնի դրական բարոյական նպատակին և, ընդ որում, չփոխի ավելի ընդհանուր բարոյական արժեքների բնույթը:

Այսպիսով, բարոյական ընտրությունը միշտ կատարվում է գիտակցաբար, ինքնակամ, համածայն անձի ներքին համոզմունքների և այդ իսկ պատճառով՝ անհամատեղելի է գործածի համար անձնական պատասխանատվությունից փախչելու, հանգամանքներով արդարանալու, որևէ հեղինակության հղումներ անելու փորձերի հետ: Պատասխանատվություն կրելը՝ կատարած արարաքների հետևանքներն ինքն իր վրա վերցնելն է, և, բառի լայն իմաստով, դրանց համար վարձահատույց լինելը: Այլ կերպ ասած, պատասխանատվությունը ազատության անհրաժեշտ ատրիբուտն է: Ինքն իրեն պատասխանատու զգալ՝ նշանակում է ընդունակ լինել ակտիվորեն գործելու սեփական դիրքերից, գործելու իրադարձությունների տրամաբանությանը համապատասխան՝ հասկանալով և գիտակցելով, թե ինչպիսի հետևանքներ կունենա քո վարքը շրջապատի վրա: Իսկ դա ենթադրում է կանխատեսել սեփական արարքի հետևանքները և ձգտել կանխարգելել իրադարձությունների հնարավոր բացասական ընթացքը. պատասխանատու վարքն այդ իմաստով՝ բանական վարքն է:

Այսպիսով, մարդկային վարքի կարգավորումն ու ազատ ընտրությունը՝ որպես բարոյականության նախապայման ուսումնասիրելը, արդիական է թե՛ տեսական, թե՛ գործնական առումներով: Տեսական առումով խնդրի ուսումնասիրությունը պայմանավորված է բարոյական արժեքների վրա հիմնված քաղաքացիական հասարակություն ստեղծելու պահանջներով, իսկ գործնական առումով՝ սոցիալ-տնտեսական ու քաղաքական նոր պայմաններում համապատասխան կողմնորոշիչների մշակման խնդրով:

---

[1] Այդ մասին մանրամասն տե՛ս *Т. Гоббс*, Избранные произведения в двух томах, т. I, М., 1965.

[2] Տե՛ս *Ա.Հովսեփյան*, Սոցիալական փիլիսոփայության հիմունքներ, Եր., 2003, էջ 177:

[3] Տե՛ս *Գ.Խրլուպյան*, Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն (Հելլենիստական և վաղ ֆեոդալական շրջան), Եր., 1978, էջ 394:

[4] Այդ մասին մանրամասն տե՛ս *«Որոգայթ փառաց»*, (Թարգմ. և ծանոթ. Պ.Խաչատրյանի), Եր., 2002:

[5] Այդ մասին մանրամասն տե՛ս *Б. Рассел*, История западной философии, Ростов н/Д, 1998, с. 101-113, 123-211, 303-314.

[6] Այդ մասին մանրամասն տե՛ս *Б. Спиноза*, Этика, Избранные произведения ,в 2 т., М., 1957, т. 1, с. 329-532.

[7] Այդ մասին մանրամասն տե՛ս *Ф.Бекон*, Новый органон, Соч. в 2 т., М., 1972, т. 2, с.13-73.